

Մուկայիթ Ա. Տարեդարձ

Հարիր Հազարաւոր Հայեր Ծիծեռնակաբերդ Գացին Խոնարհելու
Մուկայիթի Զոհերու Յիշատակին — Ստեփանակերտի Մէջ
Վոլսկի Ծաղիկներ Դրաւ Զոհերուն Յուշարձանին

Հայրենի իշխանութիւններուն եւ Հայաստանի Խորհրդային զօրքերու հրամանատարութեան մասնաւոր արտօնութեամբ, Փետրուար 28ին Հայաստանի ժողովուրդը առաւօտէն մինչեւ ուշ երեկոյ խիտ շարքերով ուղղուեցաւ Ծիծեռնակաբերդ, խոնարհելու համար Սումկայիթի ջարդի զոհերուն յիշատակին:

Օր մը առաջ, Փետրուար

27ին, Ստեփանակերտի մէջ արցախցիները հանդարտ շարքերով գացին Սումկայիթի նահատակաց Յուշարձանին ծաղիկներ դնելու, արտօնութեամբը պետական իշխանութիւններուն: Փետրուար 27ին եւ 28ի օրերը Արցախի աշխատաւորները գործի չգացին. ժողովրդային դիմումին ընդառաջելով, Ղարաբաղի յատուկ կառավարման կոմիտէն հան-

գստեան օրերը, փոխադրած էր այդ թուականներուն: Կոմիտէի անդամները, գլխաւորութեամբ անոր նախագահ Արքատի Վոլսկիի, գացին ծաղիկներ դնելու Սումկայիթի զոհերու յուշարձանին առջեւ:

Արցախի միւս շրջանները եւս բնակչութիւնը նրման ոգեկոչումներ կատարած է, կազմակերպու-

(Շար.ը տեսնել 13րդ էջ)

ՍՈՒՄԿԱՅԻԹ, Ա. ՏԱՐԵԴԱՐՁ

(Ըստ. ստաֆիևի էջի)

թեամբ կուսակցական, խորհրդային և կոմերիտական մարմիններուն:

Հայաստանի մէջ հարիւր հազարաւոր աշխատուորներ, բանուորներ, կոլանտեսականներ, ուսանողներ, մտաւորականներ, Սոււմկայիթի գոհերու հարազատներ բարձրացան Միժեռնակարերդ: Մազկեպսակներու սեւ ժողովներուն վրայ արձանագրուած են՝ «Հայ ժողովուրդի անմեղ գոհերուն», «Սոււմկայիթի գոհուածներուն», «Սոււմկայիթեան Եղեռնի անմեղ գոհերու յիշատակին», «Սոււմկայիթի նահատակներուն», և այլ նախադասութիւններ:

«Արմէնփրէս» կը հազար-

կրնար գտել իրենց արցունքը»:

Արաքսոյի Սոււմկայիթի նահատակներուն այս և ողբկոչումը արտօնուի, օրեր և շաբաթներ առաջ ժողովուրդը խնդրագիրներ ներկայացուցած է կուսակցական, խորհրդային և զինուորական մարմիններուն: Ի պատասխանն դիմումներուն, Երեւանի ժողովրդական Երեսփոխաններու Քաղտոմարի Գործադիր Կոմիտէն և յատուկ շրջանի Զինուորական հրամանատարը

25 Փետրուարին հաղորդած են, որ բանակը արգելք պիտի չրկայ ժողովուրդին Միժեռնակարերդ լուռ երթին, արգիլելով սակայն սպաստաններ, լոգոնոցները և ճա-


նուցեալ նոյեմբերէն ի վեր:

Փետրուար 28ին բացառաբար բանակը իր ներկայութիւնը զգալի չէ դարձուցած: Միժեռնակարերդի ճամփուն վրայ կարգասահութեան համար դրուած են միայն ոստիկաններ: Ամբողջ օրը ոչ մէկ միջադէպ պատահած է:

Հակառակ արգելքին սակայն, պատասխաններ ստացուած են պահանջելով Սոււմկայիթի ջարդարաններուն արդար դատաւարութիւնը, Մարդկային Իրաւանց հանդէպ յարգանքը, Ղարաբաղի ազատութիւնը, ստիսյողական վիճակի ջնջումը, Սոււմկայիթի ջարդին մէջ ազերի ղեկավարութեան սպաստասնատութեան ճանաչումը: Պաստառի մը վրայ գրուած է նաեւ անգլերէնով՝ «Ազատութիւն՝ Ղարաբաղի Կոմիտէին»: Սոււմկայիթէն վերադարձողներ կրած են ցուցատախտակներ, 36 գոհերու լուսանկարներով:

Կէսօրէն ետք, յանկարծ հնչած է նաեւ փողը, որ Երեւանի հաւաքներուն սկիզբը և աւարտը կը նշէր. այդ պահուն ժողովուրդը բողոքները բարձրացուցած է:

Երեկոյեան, յուշարձանին բարին վրայ մէկ-մէկ զետեղուած մեխակները և կակաչները կազմած են հրակայ դէզ մը՝ սպիտակ-կարմիր գոյներով:



Ստեփանակերտի մէջ Սոււմկայիթի ջարդի գոհերուն յուշարձանը

դէ թէ, յուշարձանին առջեւ չեն «լուս», գլխահակ շարքով կ'անցնին մարդիկ, կիներ, աղջիկներ, սրտնք չեն

ները: Ինչպէս գիտենք, կրակմարը կը շարունակուի կիրարկուիլ առաւօտեան ժամը 1-5, իսկ հաւաքները